ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«20» հուլիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-44/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2016թ. թիվ 1/73-3/9569-16 և 27.04.2016թ. թիվ 1/73-3/13040-16 գրություններով ներկայացված «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01401456) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.02.2016թ. թիվ 01/17 գրության հիման վրա, 15.03.2016թ. թիվ 1/73-3/9569-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու

հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 18.04.2016թ. թիվ 01/04.1/1540-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2016թ. թիվ 1/73-3/9569-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միևնույն ժամանակ Կենտրոնը արձանագրել է, որ Ընկերության կողմից մեկ անգամ է թույլ տրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ուստի գտել է, որ Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.04.2016թ. թիվ 1/73-3/13040-16 գրությամբ, վկայակոչելով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

2. «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով, 17.03.2016թ. թիվ 01/04.1/1025-16 գրությամբ դիմել է «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ին, որին ի պատասխան՝ Ընկերությունը 29.03.2016թ. թիվ ԱՀ/Գ-10 գրությամբ հայտնել է, որ «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ն 09.02.2016թ. մասնակցել է Պատվիրատուի կողմից կազմակերպված «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին: Սակայն Ընթացակարգին մասնակցության օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Ընկերությունը օրենքով սահմանված կարգով չի ծանուցվել մասնակցության արդյունքների մասին, ինչի արդյունքում որակավորման փաստաթղթերի ներկայացման համար հիմքեր չեն եղել:

«Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 11.05.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-44/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Փոքր Միեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Փոքր Միեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.02.2016թ. թիվ 01/17 գրությամբ ներկայացրել է հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված սննդամթերքի ձեռքբերման «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 7-րդ, 9-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ, 20-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով և որակավորման փաստաթղթեր չի ներկայացրել, որի արդյունքում հայտը մերժվել է:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ ներկայացրել է նաև Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

«Փոքր Միեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով 11.05.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-44/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-44/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2016թ. թիվ 1/73-3/9569-16 և 27.04.2016թ. թիվ 1/73-3/13040-16 գրություններով ներկայացված «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Փոքր Միեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ն 09.02.2016թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի 3.1 հավելվածով ներկայացրել է մասնագիտական փորձառության մասին հայտարարություն և պարտավորվել հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի 4.1 հավելվածով ներկայացրել է առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություն, որով պարտավորվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնել «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագիրը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը Ընթացակարգի 7-րդ, 9-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ, 20-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Պատվիրատուն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, 12.02.2016թ. ժամը 14:36-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6. Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

7. Կենտրոնը 18.04.2016թ. թիվ 01/04.1/1540-16 գրությամբ արձանագրել է «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության մեկ անգամ խախտելու փաստը և ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

8. ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.04.2016թ. թիվ 1/73-3/13040-16 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

5. ՍՑ-ԳԲԽ-44/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2016թ. թիվ 1/73-3/9569-16 և 27.04.2016թ. թիվ 1/73-3/13040-16 գրությունները, «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի 25.02.2016թ. թիվ 01/17 գրությունը և կից փաստաթղթերը, «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ի 29.03.2016թ. թիվ ԱՀ/Գ-10 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով

նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.5-րդ կետի 2-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած

մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի Մաս II-ի 3-րդ կետի 3.1-րդ կետի համաձայն՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և նույն հրավերի 1-ին մասի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ն «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 09.02.2016թ. հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը Ընթացակարգի 7-րդ, 9-րդ,

11-րդ, 15-րդ, 16-րդ, 20-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, 12.02.2016թ. 14:36-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժել է՝ դադարեցնելով վերջինիս՝ Ընթացակարգին հետագա մասնակցությունը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով, «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ն, որպես Ընթացակարգի համապատասխան չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, մինչդեռ համաձայն Օրենքի և հրավերի պահաջների՝ մասնակիցը հայտով պարտավորվել է ներկայացնել հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը:

Ուստի Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից թույլ է տրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հագնամանքը, որ «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում մեկ անգամ է խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը

հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, գտնում ենք, որ «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2016թ. թիվ 1/73-3/13040-16 գրությամբ նախաձեռնված «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01401456) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-44/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան